

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Ալիկ Արմենի Թորոսյանի «Աշխատանքի շուկայի ինստիտուտները որպես եկամուտների անհավասարաչափ բաշխման կարգավորման գործիք (ՀՀ օրինակով)» թեմայով Ը.00.01 «Տնտեսագիտության տեսության և տնտեսագիտական մտքի պատմություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Եկամուտների անհավասարության հիմնախնդիրը կառավարությունների առջև ծառայած կարևոր մարտահրավերներից մեկն է: Վերջին տարիներին ամբողջ աշխարհում տեղի ունեցող պատերազմական և ճգնաժամային իրավիճակները էլ ավելի են խորացրել բնակչության տարբեր շերտերի միջև բևեռացումը: Այս պայմաններում եկամուտների անհավասարության առաջացման պատճառների ուսումնասիրության կարևորությունը շատ մեծ է, որը հնարավորություն կտա խորապես հասկանալ եկամուտների անհավասարաչափ բաշխման հիմնախնդրի հաղթահարման ուղիները: Այդ պատճառների մեջ իրենց առանձնակի կարևորություն ունեն աշխատանքի շուկայի ինստիտուտները, որոնք ուղղակի ազդեցություն են ունենում բնակչության եկամուտների վրա: Հետևաբար դրանք կարևոր դեր են խաղում եկամուտների հավասարաչափ բաշխման գործում: Ուսումնասիրելով աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա՝ հնարավոր է մշակել արդյունավետ սոցիալական քաղաքականություն պետության համար: Այս ամենը տվյալ թեմայի ուսումնասիրությունը դարձնում է էլ ավելի արդիական և պահանջված:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում աշխատանքի շուկայի ինստիտուտների դերը եկամուտների անհավասարաչափ բաշխման հիմնախնդրի կարգավորման գործում: Ելնելով սահմանված նպատակից՝ ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել աշխատանքի շուկայի ինստիտուտների տեսակները ու գործառույթները և եկամուտների անհավասարության հիմնախնդիրը ու դրա էությունը,
- ուսումնասիրել տարբեր հեղինակների մոտեցումները եկամուտների անհավասարության վրա աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցության վերաբերյալ,
- վերլուծել ՀՀ-ում աշխատանքի շուկայի ինստիտուտների գործառույթները և իրավական կարգավորումները,
- հետազոտել ՀՀ-ում եկամուտների անհավասարությունը բնութագրող ցուցանիշները,
- գնահատել եկամուտների անհավասարության վրա աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցությունը,
- առաջարկել աշխատանքի շուկայի ինստիտուտների կատարելագործման ուղիներ,
- գնահատել աշխատանքի շուկայի նոր ինստիտուտների ներդրման հնարավորությունները:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- Հետազոտության շրջանակներում մշակված եկամուտների անհավասարությունը բնութագրող նոր ինդեքս ցուցանիշի միջոցով հաշվարկվել են առաջին և հինգերորդ քվանտիլային խմբերի բնակչության եկամուտների և եկամուտների անհավասարության փոփոխության տեմպն ու ուղղությունը եռամսյակային կտրվածքով:
- Պանելային մոդելների օգնությամբ հաշվարկվել է նվազագույն աշխատավարձի ազդեցությունը եկամուտների անհավասարության, ընդհանուր գործազրկության մակարդակի և երիտասարդների շրջանում գործազրկության մակարդակի վրա ինչպես տարածաշրջանային և ազգային նվազագույն աշխատավարձի համակարգեր ունեցող, այնպես էլ ոլորտային և մասնագիտական նվազագույն աշխատավարձի համակարգեր ունեցող երկրներում, որի միջոցով հնարավոր է եղել գնահատել նվազագույն աշխատավարձի երկու համակարգերի արդյունավետությունների

տարբերությունները եկամուտների անհավասարության հիմնախնդրի կարգավորման գործում:

- Պանելային մոդելների օգնությամբ հաշվարկվել է արհմիությունների խտության ցուցանիշի ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա, որի միջոցով հնարավոր է եղել ուսումնասիրել ՀՀ-ում արհմիությունների անարդյունավետ գործունեության պատճառները:
- Գնահատվել է ՀՀ-ում գործող նվազագույն աշխատավարձի ազդեցությունը միջին աշխատավարձի, աշխատանքի արտադրողականության և զբաղվածության մակարդակների վրա և ստացված արդյունքների հիման վրա քննարկվել և հիմնավորվել է ՀՀ-ում ոլորտային նվազագույն աշխատավարձի ներդրման հնարավորությունը:
- Գնահատվել է կորոնավիրուսով վարակվածների թվաքանակի աճի տեմպի ազդեցությունը գործազրկության մակարդակի վրա՝ ինչպես աշխատանքի պահպանման սխեմաները որպես երկարաժամկետ քաղաքականության գործիք օգտագործող, այնպես էլ որպես կարճաժամկետ քաղաքականության գործիք օգտագործող երկրներում, ինչի արդյունքում հնարավոր է եղել պարզել աշխատանքի պահպանման սխեմաների առավել արդյունավետ օգտագործման եղանակը:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված զրականության ցանկից և հավելվածներից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել է հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և սուբյեկտը: Ներկայացվել են ատենախոսության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, աշխատանքի գիտական նորությունները և ատենախոսության գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Աշխատանքի շուկայի ինստիտուտներ և եկամուտների անհավասարաչափ բաշխման հիմնախնդիրը» նվիրված է ատենախոսության շրջանակներում ուսումնասիրված աշխատանքի շուկայի ինստիտուտների (նվազագույն աշխատավարձի, արհմիությունների, զբաղվածության պաշտպանության օրենսդրության և աշխատանքի պահպանման սխեմաների) էության,

տեսակների, գերծառայությունների և ազդեցության շրջանակների, ինչպես նաև եկամուտների անհավասարաչափ բաշխման հիմնախնդրի էության, առաջացման պատճառների և հետևանքների համակողմանի ուսումնասիրությանը: Քննարկվել են նաև եկամուտների անհավասարաչափ բաշխման վրա աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցության գնահատման տեսամեթոդական հիմնահարցերը: Այս գլխում ատենախոսը ուսումնասիրել և քննարկել է աշխատանքի շուկայի ինստիտուտների ու եկամուտների անհավասարության հիմնախնդրի տեսամեթոդական հիմնահարցերը, ինչպես նաև ուսումնասիրել է եկամուտների անհավասարության վրա աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցության վերաբերյալ տարբեր հեղինակների աշխատանքները:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «ՀՀ աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցությունը եկամուտների անհավասարաչափ բաշխման վրա», ատենախոսը ուսումնասիրվել է ՀՀ-ում եկամուտների անհավասարությունը բնութագրող ցուցանիշները, ապա ուսումնասիրվել է ՀՀ-ում գործող աշխատանքի շուկայի ինստիտուտների գործառույթները և իրավական կարգավորումները: ՀՀ-ում եկամուտների անհավասարությունը ուսումնասիրելու համար ատենախոսը առաջարկել է բնակչության եկամուտների եկամուտների տեմպը և ուղղությունը, որը հնարավորություն է տվել խորապես ուսումնասիրել եկամուտների անհավասարության առաջացման պատճառները: Այս գլխումը ատենախոսը գնահատել է նաև եկամուտների անհավասարության վրա ուսումնասիրվող աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցությունը: Դրա համար նա օգտագործել է պանելային մոդելներ:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Աշխատանքի շուկայի ինստիտուտների բարելավման ուղիները եկամուտների անհավասարության նվազեցման համատեքստում», ատենախոսը, ընդհանրացնելով նախորդ զրուխներում կատարված գնահատումների արդյունքները, առաջարկել է աշխատանքի շուկայի ինստիտուտների կատարելագործման ուղիները: Ատենախոսը, օգտագործելով իր կողմից հաշվարկված պանելային մոդելների արդյունքները, ինչպես նաև տարբեր հեղինակների մոտեցումները եկամուտների անհավասարության վրա աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցության վերաբերյալ, հիմնավորել է աշխատանքի շուկայի ինստիտուտների հիմնական մարտահրավերները և նոր աշխատանքի շուկայի ինստիտուտների ներդրման հնարավորությունները:

Աշխատանքի եզրակացություններ և առաջարկություններ բաժնում ներկայացվել են ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների, ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքները, ձևակերպվել են հիմնական եզրահանգումներն ու դրանցից բխող ատենախոսի առաջարկությունները:

Ատենախոսության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը

Ներկայացված ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ-ում եկամուտների վերաբաշխման քաղաքականության մշակման և արհմիությունների գործունեության բարելավման գործընթացներում:

Ատենախոսական հետազոտությունը կարող է խթանել ՀՀ-ում աշխատանքի շուկայի ինստիտուտների ուսումնասիրությունները՝ որպես եկամուտների անհավասարաչափ բաշխման գործոն:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունն, իր դրական արժանիքներով հանդերձ, ունի նաև որոշակի թերություններ, որոնցից կարելի է նշել հետևյալը.

1. Ատենախոսության աղյուսակ 2-ից (էջ 84) ակնհայտ երևում է, որ նվազագույն աշխատավարձի ազդեցությունն ընդհանուր գործազրկության մակարդակի վրա վիճակագորեն ոչ նշանակալի է ($\text{prob } t\text{-statistic} = 0.4512 > 0.05$), մինչդեռ հեղինակը մեկնաբանում է, որ «նվազագույն աշխատավարձի մեկ միավոր աճը ընդհանուր գործազրկության մակարդակը բարձրացնում է 0.03 միավորով»: Ուստի խնդրահարույց է այն պնդումը, որ մոդելի արդյունքներով հերքվում է տնտեսագետների շրջանում տարածված այն տեսակետը, որ նվազագույն աշխատավարձը եկամուտների անհավասարության վրա ազդում է զբաղվածության միջոցով:

2. Էջ 88-ում հեղինակը գրել է, որ կազմվել է երեք պանելային մոդելներ, որպեսզի գնահատեն արհմիությունների ազդեցությունը եկամուտների անհավասարության, զբաղվածության մակարդակի և միջին ամսական անվանական աշխատավարձի մակարդակի վրա և մոդելներում ընդգրկվել է ֆիքսված ազդեցությունների գնահատիչը (**Fixed effects**): Մինչդեռ հավելված 8-ում ներկայացված Հաուսմանի թեստի արդյունքներով

ստուգվող գրոյական վարկածը չի մերժվում (Prob. Chi-Sq.= 0.0679>0.05), ինչը նշանակում է, որ անհրաժեշտ է կիրառել **Random effects** մոդելը (էջ 176) :

3. Մեր կարծիքով, վիճելի է հեղինակի կողմից մի խումբ երկրներում զբաղվածության պաշտպանության օրենսդրության խստության աստիճանի գնահատումը (էջ 93-97): Ուսումնասիրվող երկրներում զբաղվածության պաշտպանության օրենսդրության խստությունը գնահատելու համար օգտագործվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ներկայացված զբաղվածության պաշտպանության 9 խումբ օրենսդրական նորմերը: Հավելյալ մեկնաբանման կարիք կա հեղինակի իրականացրած հաշվարկների և արդյունքների արժանահավատության վերաբերյալ: Այնուհետև գծապատկեր 23-ում (էջ 97) հեղինակը համադրել է ստացված զբաղվածության պաշտպանության օրենսդրության խստության աստիճանները և ստվերային տնտեսության չափերը, մինչդեռ վերջինիս տվյալների համար հիմք է հանդիսացել 2010 թ. հրատարակված զեկույցը, որում ներկայացված են ստվերային տնտեսության գնահատականները 1999-2007 թթ. ժամանակահատվածում:

3. Ատենախոսության «3.2.1. Ոլորտային նվազագույն աշխատավարձի ներդրման հնարավորությունները ՀՀ-ում» ենթաբաժնում նշվում է. «Հասկանալու համար արդյո՞ք ազգային և տարածաշրջանային նվազագույն աշխատավարձի համակարգերը արդյունավետ են, թե ոչ՝ անհրաժեշտ է գնահատել նաև ոլորտային և մասնագիտական նվազագույն աշխատավարձի համակարգերի արդյունավետությունը եկամուտների անհավասարության դեմ պայքարում: Դրա համար ուսումնասիրվել է ոլորտային և մասնագիտական նվազագույն աշխատավարձի համակարգ ունեցող այնպիսի երկրներ, որոնց մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն փոքր է 15000 ԱՄՆ դոլարից: Վերլուծության համար ընտրվել են 7 երկրներ» (էջ 112): Ցանկալի կլիներ որ հեղինակի կողմից ավելի հանգամանալից մեկնաբանվեր այնպիսի երկրների ընտրությունը, ինչպիսիք են Արգենտինան, Կոստա Ռիկան, Դոմինիկյան հանրապետությունը, Էկվադորը, Սալվադորը, Հոնդուրասը և Պանաման:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում իրականացված հետազոտության արդյունքները: Ա. Թորոսյանի ատենախոսությունը արդիական, ինքնուրույն և պատշաճ մակարդակով կատարված հետազոտություն է: Հեղինակը դրսևորել է մասնագիտական գիտելիքներ և վերլուծական ընդունակություններ:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, իսկ հրապարակված 6 հոդվածներում ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ալիկ Արմենի Թորոսյանի «Աշխատանքի շուկայի ինստիտուտները որպես եկամուտների անհավասարաչափ բաշխման կարգավորման գործիք (ՀՀ օրինակով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությունների ներկայացման պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Հ.00.01 «Տնտեսագիտության տեսության և տնտեսագիտական մտքի պատմություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

*Պաշտոնական ընդդիմախոս
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

Ա.Ն. Գալստյան

*Ա.Ն. Գալստյանի ստորագրության
խսկությունը հաստատում եմ՝
Երևանի պետական համալսարանի գիտական
քարտուղար*

Ս.Վ. Հովհաննիսյան



26.06.25թ.